Համաձայնագիր-1
28.11.2018թ. կնքված N ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/021-1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «29» «Նոյեմբեր» 2018թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Բի Լայն» ՍՊԸ-ն այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս Ընկերության տնօրեն Լ. Քեսապլյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և հիմք ընդունելով 28.11.2018թ. կնքված ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/021-1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 8.5 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի <<ը>> կետը Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ հեռախոսային սարքերի մատակարարման ժամկետը փոփոխել՝ սահմանելով մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվուում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅԱՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Բի Լայն» ՍՊԸ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	ՀՀ, ք. Երևան, Խանջյան 50
ՀՎՀՀ 02647057	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013574016	Հ/Հ 1570017509080100
ՀՀ ՖՆ աշխատակազմի	ՀՎՀՀ 02522096
գործառնական վարչություն	Տնօրեն
Գլխավոր քարտուղար	
Է. Գևորգյան _____ /ստորագրություն/ Կ.Տ/	Լ. Քեսապլյան _____ /ստորագրություն/ Կ.Տ/